ՀՀ ԿԳՄՄՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ «Հայրենասիրությունը «Սասունցի Դավիթ» էպոսում**»**

Մասնակցի անուն, ազգանուն՝ Նելլի Ավետիսյան

Դպրոց՝ Արարատի մարզ, Լուսառատի միջնակարգ դպրոց

Դասավանդած առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Արարատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3

Գլուխ Առաջին 4

Հայրենասիրությունը «Սասունցի Դավիթ» էպոսում 4

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը՝ Հայ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դուցազներգություններ, որոնց մեջ ամենաբնորոշը, առավել նշանակալիցը, ամենից ավելի արտահայտիչն ու հերոսականը, մեծն ու համայնապարփակը «Սասունից Դավիթ» էպոսն է:

Էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել մինչև մեր ժամանակներն ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է:

Վերլուծելով էպոսի հերոսների արարքներն ու հասարակական վարքը, ցույց տալով նրանց գլխավոր հատկանիշները՝ ազատատենչություն, հայրենասիրություն, մարդասիրություն, մարդկային մի շարք բարոյական արժեքներ, փորձել ենք ընդգծել էպոսի ոչ միայն ազգային, այլև համամարդկային էությունը. Արդարամիտ են, վեհանձն, բռնության դեմ անողոք, լավի դեմ անսահման բարի ու սրտակից, մանկական մաքուր պարզությամբ, բայց ոչ պարզունակությամբ: Բոլոր պարագաներում հերոսները չեն կորցնում իրենց մարդկային բարձր առաքինությունները:

Հետազոտության նպատակը՝

- Խթանել աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն,
- Զարգացնել «Սասունցի Դավիթ» էպոսի մասին գիտելիքների,
- Ուշադրության կենտրոնում պահել երբեք չհնացող մեր էպոսն ու նրա բարոյական մաքրությունն ու ամրությունը, համընդհանուր գաղափարախությունը:

Հետազոտության խնդիրները՝

- Գնահատել աշակերտների հայրենասիրությունը,
- Վերլուծել էպոսի արդյունավետությունը հայրենասիրության դաստիարակության գործում
- Մշակել արդյունավետ ուսուցման քայլաշար:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը՝ Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների

կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Գլուխ Առաջին

Հայրենասիրությունը «Սասունցի Դավիթ» էպոսում

Հայ ժողովրդական բանահյուսության հնամենի գանձերից ամենամեծն իր արժեքով «Սասնա ծռեր» էպոսն է, որն իր երրորդ ճյուղի անունով կոչվում է նաև «Սասունցի Դավիթ»: Այն իր հիմնական բովանդակությամբ արտացոլում է Հայաստանում մոտ երկու հարյուր հիսուն տարի տևած արաբական բռնատիրության ժամանակաշրջանը: Էպոսի ընդգրկած ժամանակահատված VII-X դարերն են: Սակայն էպոսի պատմումների ստեղծումը կապվում է ավելի ուշ ժամանակների հետ:

Այն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ազային երազանքները, բնավորությունը, իղձերն ու ձգտումները: Այն, հյուսվելով ժողովրդի կողմից, վերցրել է նրանից ամենանվիրականն ու երանելին: Շատ գեղեցիկ է նկարագրում մեծանուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հայ ժողովրդական էպոսի ստեղծումը՝ այն համեմատելով մարգարտի ստեղծման հետ. «Քանի դեռ խեցու մեջ աննշան ավազահատիկի ձևով կողմնակի մարմին չի ներթափանցել, քանի դեռ կենդանին չի հիվանդացել, և նրա վրա չի գոյացել չնչին աչքի համար անտեսանելի կրաշերտ, ոչ մի մարգարտի մասին խոսք լինել չի կրող:

Այնուհետև ելուստի շուրջը շերտավորվում է աղերի ազդեցության տակ գոյացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտ, որը հետագայում կարող ենք նայել ու հիանալ»: Իսկապես, ինչպես խեցու մեջ մարգարիտ է գոյանում, այնպես էլ հյուսվել է հայ ազգային էպոսը: Հիմքում թեթև աննշան թվացող մի կորիզ է, սակայն, այն, իր վրա նորանոր շերտեր ընդունելով, վերածվել է մի չքնաղ մարգարտի, որն իր անջնջելի հետքն է թողել ու թողնում սերունդների վրա՝ արժանի տեղ գրավելով համաշխարհային գրական մեծ օվկիանում: Այն ոչ միայն ազգային կենդանի նկարագիր է այլև համամարդկային կենսական իրավունքի պաշտպանության լավագույն օրինակ:

«Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին»,- գրում է բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը:

Հայ ժողովրդական էպոսն արտացոլում է ժողովրդի կյանքը, վարքն ու բարքը, արտաքին ու ներքին կեղեքիչների դեմ մղված հերոսամարտերը, ինչպես նաև պատերազմի ու խաղաղության, աշխատանքի ու բարեկամության ժողովրդական ըմբռնումը: Ֆրանսիացի մեծ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին «Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանության իր նախաբանում առանձնացնում է պատմական այն շերտերը, որոնք և կազմել են էպոսի Ժամանակային հիմքը. «Նրանում կան հայերի պայքարը արաբական խալիֆարի և Եգիպտոսի մելիքների դեմ, արտացոլված են հարաբերությունները խաչակիրների և բյուզանդական կայսրերի հետ»:

Ըստ էպոսի մի շարք պատումների՝ հայ ժողովրդի վրա հարձակվել են աշխարհի բոլոր կողմերում եղած ջարդարարները, որոնց քանակի անսահմանությունն էպոսում միշտ արտահայտվել է ծովի ավազի և երկնքի աստղերի պատկերավոր համեմատությամբ, Սա ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում ենթարկվել է ոչ միայն ֆիզիկական, այլև տնտեսական, իրավական, քաղաքական, բարոյական ծանր ճնշումների: Էպոսի բացառիկ արժեքներից են նրանում արտահայտված գաղափարները, որոնցից առաջատարները հայրենասիրությունը, ազատատենչությունն ու մարդասիրությունն են:

Ազատության տենչը մաղովուրդն արտահայտում է ամբաղջ էպոսում սկզբից մինչև վերջ: Ի վերջո էպոսը ծնվել է հայ ժողովրդի ազատագրական կռիվներում: Արաբական խալիֆաթի նվաճողական արշավանքի նկարագրությամբ էլ բացվում է դյուցազներգության առաջին էջը.

Բաղդադի Խալիֆան շատ գոր ու զորընդեղ էր.
Ասքար արեց, էկավ վեր մեր ազգին:

Հայրենասիրության ու ազատատենչությամբ, գերբնական ուժով ու մեծ մարդասիրությամբ: Նրանք պայքարում են ժողովրդի անկախության ու ազատության համար, մարդկանց համար խաղաղ ու երջանիկ կյանք ստեղծելու, խաղաղ ու ազատ աշխատանքով զբաղվելու համար: Էպոսի առաջին էջերից հորդում է հայրենասիրությունն ու մեծ մարդասիրությունը, որի մարմնավորողը հայ կինն է՝ Ծովինարը՝ Հայոց Գագիկ թագավորի դուստրը:

Արաբական խալիֆը հարկի դիմաց պահանջում է, որ Գագիկ արքան կնության տա դստերը և զգուղացնում, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Տարբեր

կարողիքներ են ծայր առնում, չէ՞ որ խալիֆը կռապաշտ էր: Հակառակ հոր ցանկության Ծովինարը մտածելով ժողովրդի մասին՝ վճռում է իր անձը զոհել հանուն ընդհանուրի և գնալ Բաղդադի խալիֆի մոտ.

- Ու ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Զամեն տի սպանի իմ պատճառով:

Ծովինարի այս արարքը ոչ միայն հայրենասիրության դրսևորում այլ խոր մարդասիրության ապացույց: Ժողովուրդն անսահման հայրենասիրությամբ է օժտել էպոսի բոլոր հերոսներին՝ չստորադասելով կնոջը՝ տղամարդուն: Հայրենասիրության այս արմատից էլ ծնվել են այս դյուցազունները: Ծովինարի անձնազոհությունը ոչ միայն հայ ժողովրդի փրկության համար է, այլև հայրենի հողի ու ջրի, որից էլ ծնվում են երկվորյակ եղբայրները՝ Սանասարն ու Բաղդասարը: Ջուրն էպոսում, որպես բնության կենարար տարերք՝ հավերժության խորհրդանիշ է: Սա ցույց է տալիս և՛ հայ ժողովրդի, և հայրենի հողի հավերժությունը: Այդ հավերժությունը դրոշմելու համար են մարտնչում Սասնա հերոսները, որոնց ժողովուրդն օժտել է իր բնավորության հիմնական գծերով: Էպոսի հերոսների հետ մեկտեղ հանդես է գալիս հենց բուն ժողովուրդը, իր գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչներով: Հանդես է գալիս, որպես դյուցազուններին ապավեն, նրանք միասին են կազմում էպոսի կատարելությունը: Էպոսում արաբական բռնակալության դեմ կռվում են Սասնա չորս սերունդ դյուցազունները՝ Սանասարն ու Բաղդասարը, Մեծ Մհերը, Դավիթն ու Փոքր Մները: Նրանք բոլորն էլ կախված են ազատ ապրելու դաղափարով: գովելով արաբական խալիֆայրի դեմ, դյուցազունները հոսջորդաբար ջարդում են նրա ուժերը: Բայց հենք, որ մի սերունդը մահանում է, մաչն հաջորդ սերնդի նասոռնայումը՝ թալանամոռ ռազմամոլ թշնամին նոր ուժեր է հավաքում ու կոտորածով մտնում Սառմա տուն ու հարկ պահանջում: Ազատագրական պայքարի ոգին միշտ վառ է մնում Էսպոուում և արծվի պես սավառնում է ժողովրդի մտածոգության մտահորիզոնում: Խալիֆայության կատարած երկարատև ավերումների ու հարկահանության ահռելիությունը ցույց տալու համար, հայ ժողովուրդը չի սահմանափակվում միայն մեկ սերնդի հայրական կավով: Կյանքի ու մահվան այս թոհուբոհում ժողովուրդը չի մոռանում ստեղծարար աշխատանքի մասին, հակառակը, պայքարում է հենց համաժողովրդական խաղաղ աշխատանքի համար: Ոչ միայն սլայքարում ձև, այլ

հենց իրենք էլ անմիջական մասնակիցն են դառնում այդ աշխատանքին: Օհոված լինելով մեծ մարդասիրությամբ և հայրենասիրությամբ՝ Սանասարն ու Բաղդասարը նախ կառուցում են աղքատ ժողովրդի համար տներ հետո հիմնում իրենց բերդը, որը անկախություն նվաճած, ազատ, հզոր, անհաղթ Հայաստանի խորհրդանիշն է: Բովանդակ ազատության ձգտող ժողովուրդը, համոզված է, որ իր երազած բովանդակ ազատությանը կհասնի միայն նոր կառուցած տանը.

- Առաջ շինենք զեղոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարևա
Արևուն առջն կենա
Ու սկսեցին զտներ[1]:

Ժողովուրդն իր դարավոր երազանքներն իրականացնողներին օժտում է գերբնական ուժով, նա հասարակ մարդուն անզոր է համարում դիմակայելու, իր գլխից մութ ամպերը վանելու համար: Հզոր, կատաղի թշնամու դեմ մահացու կռիվ մղելու համար ժողովրդին հարկավոր են դիցական հերոսներ՝ ջրածին քաջեր, ովքեր հագեցած են անսահման բարի ու խիզախ սրտով: Կենարար ջրից են հզորանում հերոսները: Այս մասին գրում է Մանուկ Աբեղյանը, «Հայաստանի կյանքի պայմաններում, ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի զորության աղբյուրը ջուրն է»: Կամ «Լեռնոտ Հայաստանում ջուրը պաշտվում էր որպես առնականության, անհաղթության աղբյուր: Վահագնը, հայոց հերոսության աստվածը, ինչպես երգում էին Գողթան երգիչները, ծնվել է ծովում հրդեհված եղեգնուտի բոցերից»:

Ժողովրդի իմաստության յուրահատուկ դրսևորում է այն, որ եղբայրներն իրենց տան անունը վստահում են ալեզարդ հալվորին: Եղբայրները նրան բերում են իբրև պատվավոր հյուրի, ման են պահում ամրոցի շուրջը և ծերունին քարաժայռերի մեծությունից՝ ապշած, ամրոցի անունը կնքում է Սասուն:

Դուք են սասուն քարեր
Ի՞նչպես հաներ եք էն վերին տեղ,
Ու քարե սան ուն եք զարկե

[1]Տես՝ Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, նկ. Հ. Կոջոյան, Լույս հրատ, Երևան, 1981:

Էս տու՛ն չեք շինե դուք,
Ապա սասուն մեք շիներ:

Ժողովրդի իմաստության յուրահատուկ դրսնորում է այն, որ եղբայրներն՝ իրենց տան անունը վստահում են ալեզարդ ծերունուն: Ծերունին, արտատեր պառավը, Քեռի Թորոսը, Ձենով Հովանը և այլ տարեց մարդիկ էպոսում մարմնավորում են ժողովրդի իմաստությունը և իրենց խրատներով ու խորհուրդներով, կյանքի փորձով ճիշտ ուղղություն են տալիս հերոսների գործողություններին: Մեծ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին գրում է. «Այս հերոսները գերմարդիկ են ոչ միայն ֆիզիկական ուժի տեսակետից, այլև իրենց բարոյական հատկանիշներով»:

Եղբայրները ծերունուն բերում են իբրև պատվավոր հյուրի, Քուռկիկ Ջալալու մեջքին նստած ման են ածում բերդի շուրջը: Եղբայրների այս արարքը ազգային դիմագծի ցայտուն օրինակ է, այն ցույց է տալիս ազգային բարձրարժեք և հայ ժողովրդին հատուկ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հյուրընկալությունը, հյուրասիրությունն ու հարգանքը հյուրի նկատմամբ: Հերոսները ոչ մի դեպքում չեն խզում կապը ժողովրդի հետ: Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անաղարտությունն ու օգնության ամեն կանչին անհապաղ արձագանքելու պատրաստակամությունը: Հովսեփ Օրբելին այս առիթով գրում է. «Այս չորս հերոսների անունները՝ ժողովրդի հիշողության մեջ աղարտվել ու խճողվե ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»:

Օժտված լինելով բարոյական բարձր հատկանիշներով: Սանասարն ու Բաղդասարն իրենց պարտքն են համարում կռվել օտար զավրիչների դեմ հանուն հայ ժողովրդի ազատության ու հետագա գոյության: Առաջին ճյուղում Սանասարի ու Բաղդասարի մղած կռիվը Ծովինարին թշնամուց՝ Բաղդադի խալիֆից պաշտպանելու և Դեղձունին դնից ազատագրելու համար է Ծովինարն այս դեպքում մայր հողի խորհրդանիշն է և ազատագրելով մորը՝ եղբայրներն ազատագրում են հայրենի, հափշտակված հայրենիքը: Ժողովուրդը Սասնա դյուցազունների համար կերտել է լիովին համապատասխան սիրեցյալներ: Էպոսում կանայք գեղեցկության ու քնքշության հետ մեկտեղ խիզախ են, մարտունակ և հանդես են գալիս որպես մեծ նվիրումով հայրենիքի պաշտպաններ: Ասվածի վառ ապացույցն այն դրվագն է, երբ

Սանասարի մահվանից հետո Դեղձուն Սամը քուռկիկ Ջալալին հեծած մի քանի տարի քաջաբար կառավարում է երկիրն ու պաշտպանում նրա սահմանները:

Դեղձուն Ճուղ-Ծամ հեձավ Քուռկիկ Ջալալուն,

Գնաց սարեր ֆրոա,

Ուշագրավ է Ֆրեդերիկ ֆեյդիի բնորոշումը կանանց կերպարների մասին. «Եթե բոլոր հերոսները ներկայացնում են համարյա նույն բնավորությամբ, որը նորմալ է նրանց ծննդակարգի պատճառով, կանայք շատ տարբեր են. կախարդներ, պատերազմողներ և այլն, բայց նրանք, ովքեր ամուսնության հետևանքով դառնում են հայեր, կրում են իր արժեքը իմացող հայ կանանց հատուկ բոլոր իդեալական հատկությունները...»:

Ապրելով պատերազմական երկրում, անկախ տեռվց ոռ, տարիքից անհրաժեշտ է ուժեղ լինել, պատրաստ ամեն տեսակ աջակցության, հարկ եղած դեպքում կանգնել տղամարդու կողքին և պաշտպանել հայրենիքը, ի վերջո դա արվում է ոչ միայն իրենց, այլև գալիք սերունդների համար: Պատմության դասերը ոչ միայն Դեղձունի, այլև շատ անուններ կհուշեն մեզ Սոսե Մայրիկ, Այծեմնիկ և այլք[2]:

Սանասարն ունենում է երեք զավակ Զենով Հովան, Վերու և Միեր Զավակներից՝ Զենով Հովանը մշտնջենական կերպար է և ապրում է էպոսի բոլոր ճյուղերում: Զենով Հովանի կերպարը ժողովրդին սթափեցնողն ու ոգեշնչողն է էպոսում: Սասնա դյուցազուններին Ժողովուրդն իդեալականացրել է, բայց ոչ ինքնախաբեության միտումով: Կերտելով Սանասարի մյուս զավակի՝ Վերգոյի կերպարը, ժողովուրդը ցանկացել է խիզախի կողքին ցույց տալ նաև վախկոտին: Այսինքն ցույց տալ հասարակության բազմաշերտությունը և այն, որ անվախ ու քաջ հերոսի կողքին կարող է հանդես գալ թույլն ու վախկոտը: Դժբախտությունն այն է, որ հերոսները վերցնելով Սասնա տանը տրված բոլոր լավագույն գծերը, նրանք ոչինչ չեն թողել մյուսներին, բացի հորեղբայր Հովանի հուժկու ձայնից: Այնուամենայնիվ հայ ժողովուրդը մեծ բարեսրտությամբ ու հստակությամբ է կերտել իր թե՛ դրական, թե՛ երգիծական և թե՛ բացասական հերոսներին»,- գրում է Ֆ. Ֆեյդին:

Սանասարի մահից հետո Սասունը դառնում է հարկատու Մսրա Մելիքին: Հայ Ժողովուրդը ստիպված է լինում պայքարել և արտաքին և ներքին թշնամու դեմ:

[2] Տես՝Գասպարյան Դ., Գրականություն, 9-րդ դասարան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2018: 2. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960:

Ներքին թշնամին այս պարագայում առյուծն էր, որ փակել էր Սասունի հացի ճանապարհը: Չափահաս դառնալով՝ Միհրը, որ Սանասարի զավակներից ամենաքաջն էր, ինքն է խնամում Սասունը: Նա մարտնչում է Մսրա Մելիքի և հացի ճանապարհը փակած առյուծի հետ: Առյուծի հետ գոտեմարտից հետո Միհրը ստանում է Առյուծաձև մականունը, ինչը ցույց է տալիս Միհրի ուժի մեծությունը: Այստեղ առյուծին կարող ենք համարել Մսրա Մելիքի երկվորյակը, մի տարբերությամբ, որ Մելիքը Սասունին սպառնում էր հարկահանությամբ, իսկ առյուծը սովամահության վտանգով: Միհրը կռվում է և արտաքին թշնամու՝ Մելիքի, և՛ ներքինի՝ առյուծի դեմ: Այս ճյուղում նույնպես տեսնում ենք իր անձը հայրենիքի շահին գոհող հայ կնոջ կերպարը: Միհրի կինը՝ Արմաղանը, մի կողմ դնելով կանացի ինքնասիրությունն ու վիրավորանքը, ներում է ամուսնուն, որն իր երդման համաձայն գնացել էր Մսր: Եվ Սասնո ճրագը վառ պահելու համար խախտում է իր ուխտը և որդի ծնում: Չնայած նրան, որ ամուսինները գիտեին իրենց մահանալու մասին, միևնույն է զոհում են իրենց: Դավրի ծննդյան դրվագից ոչ միայն անձնազոհություն, այլև հայոց տունը շեն պահելու և հայրենիքի հանդեպ մեծ սեր է հորդում: Տեղին կլինի խոսել նաև Միհրի զոջման մասին: Միհրը զոջում ու Սասուն է վերադառնում այն ժամանակ, երբ լսում է, թե ինչպես է Իսմիլ Խաթունը որդուն խաղացնում և ասում, որ որդին՝ Մելիքը, Մսրա օջախը շենացնի և հայ օջախը փչացնի: Սա ազգային ինքնասիրության վառ դրսևորում է:

Հայ ժողովրդի բնավորության գծերը, հավատալիքներն ու մարդասիրական գաղափարները մարմնավորված են Դավթի հավաքական կերպարում: Նրա կյանքն էպոսում պատկերված է ծննդյան օրից մինչև մահը: Նա Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն է, ամենատեսանելին, կյանքով լին ու ամենագեղեցիկը: Ծնված պահից արդեն որբացած Դավիթն իր մանկությունն անց է կացնում օտարության մեջ՝ Մսրում: Սակայն սնվում ու մեծանում է միայն Սասունից բերված կարագով ու մեղրով: Սա հայրենի եզերքի հետ մարդու ոչ գիտակցված, բայց ամուր կապն է: Ուժի կողքին Դավիթն ունի մի կարևոր բնավորության գիծ ևս՝ ազատատենչ է, չի հանդուրժում բռնությունը և ոչ մի կերպ չի հնազանդվում Մսրա Մելիքին: Երբ նրան զոռով ուզում են անցկացնել Մելիբի թրի տակով, նա նետվում է մի կողմ, ճկույթը դիպչում է քարին և «քարեն կրակ էլավ»:

Վազիր Դավթի պառեկ բռնեց,

Հոլրեց, քաշեց,որ անցուցի թրի տակով.

Դավիթ չը գնաց, չանցավ թրի տակով,

Կըշտով անցավ,

«Այդ արարքը՝ սիմվոլիկ ձևով ազդարարում է թշնամուն հետագայում ջախջախելու ժողովրդի պոտենցիալ ուժի մասին, որը հզորանում է այնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ սաստկանում է ճնշումն ու հալածանքը»,- գրում է Գրիգոր Գրիգորյանը։

Անցնելով փորձությունների միջով՝ Դավիթը վերադառնում է Սասուն, ուր հորեղբայրը՝ Ձենով Հովանը, նրան դարձնում է նախրապան ու գառնարած։ Այս երկու աշխատանքներում էլ Դավիթը հաջողության չի հասնում։ «Ժողովուրդը լավ է հասկանում, որ ազգի առաջնորդը նախապատրաստված պետք է լինի առավել բախտորոշ և եզակի գործողության համար։

Դավիթը պետք է տնօրինի ազի ներկայի ու ապագայի սրբազան գործը, նա հաջորդն է իր հոր՝ Մեծ Մհերի»",- գրում է Ա. Դոլուխանյանը։

Մսրա Մելիքի կերպարում խտացված են բոլոր ժամանակների հարստահարիչներն ու օտար զավթիչները։ Նա չի բավարարվում միայն ժողովրդի ունեցվածքի հափշտակումով, մարդկանց գերեվարելով։ Նա փորձում է գրավել Սասունն ու ստրկացնել ժողովրդին։ Դավիթն էլ լինելով ժողովրդի մի մասնիկը և ունենալով ժողովրդի ցանկալի անսասան ուժը պայքարում է բոլոր ժամանակների մսրամելիքների դեմ։ Այս մասին գրում է Հովսեփ Օրբելին, «Մեզ համար Սասնա հերոսները թանկ են մի շարք պատճառներով։ Ամենից առաջ նրանք բանկ են ժողովրդի հետ ունեցած իրենց միասնության գիտակցությամբ, այն ժողովրդի, որի զավակներն են իրենք»։

Ժողովուրդն Էպոսում ի հակադրություն մսրամելիքների, Բաբը Ֆրենկի ու մյուս ջարդարարների, նրանց կողքին ստեղծում է նույն հատկանիշներով օժտված ներքին թշնամիներին՝ առյուծին, ջրարգել վիշապներին, դևերին, վերջիններիս համարելով նախորդների երկվորյակները։ Նրանց մասին ժողովուրդները ստեղծել են մի շարք պատմություններ։ Ըստ այդ պատմությունների Մհերն Արմաղանին փրկում

է Սպիտակ դևից, Փոքր Միերը քառասուն աղջիկների՝ Կուպ դևից, իսկ Դավիթը Խանդութ Խաթունին՝ Համզա դևից[3]։

Դավթի ուժը նպատակաուղղում է արտատեր պառավը, որից էլ Դավիթն իմանում է Քուռկիկ Ջալալիի ու Թուր Կեծակիի տեղը։ Իմանում է նաև արաբ հարկահանների կոտորածների մասին։ Դավթի մեջ հասունանում է ազգի առաջնորդի ոգին ու նա սկսում է ազնվաբար ծառայել հայրենիքին։ Գրիգոր Գրիգորյանը գրում է. «Մերկացրած Թուր Կեծակին ձեռքում Մսրա Մելիքի դեմ դուրս գալով Դավիթը, դաժան կռվում սպանում է նրան և ժողովրդին ազատագրում ֆիզիկական բնաջնջումից։ Դավթի հետ է ողջ Սասնա ժողովուրդը՝ սկսած Ձենով Հովանից, վերջացրած արտատեր աղքատ կնոջով։ Դավթին խրատող և ամեն անգամ Սասունին սպառնացող վտանգի մասին ահազանգող պառավ կինը՝ Դավթի բոլոր գործողություններին որոշակի ընթացք տվող և նրան օգնող ժողովուրդն է, որը ուժ է ներշնչում հայրենի հողի պաշտպանության համար»։

Սա հիմնավորում է այն, որ Դավիթը ժողովրդի հավաքական միասնության մարմնավորումն է։ Ժողովուրդը նրան օժտել է ամենաազնիվ ու մարդկային բարձր արժանիքներով։ Նա մեծահոգի է և այդ մեծահոգությանը հանդիպում ենք ամբողջ «Սասունցի Դավիթ» ճյուղում։ Նույնիսկ կռվում Դավիթը չի մոռանում իր արժանիքների մասին, նա արթնացնում է Մսրա Մելիքի զորքին, պատվիրում պատրաստ լինել կռվի։

Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց.- «-հե՞.

Ով քընած է՝ արթուն կացեք, Ով արթուն է՝ ձիե՞ր թամբեք,

Ով թամբեր է զենքե՞ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՞ք, հեծե՞ք.

Չ'ասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց»։

Ի հակադրումը՝ Դավթի ժողովուրդը կերտել է Մելիքի կերպարը՝ լի նենգությամբ, խորամանկությամբ, ճնշելու ու ստրկացնելու, տիրելու մոլուցքով, իսկ Դավթի մեջ՝ ժողովուրդը շեշտել է նրա բացառիկ առաքինությունները։ Դավիթն անգամ Մելիքի նենգությունից, իրեն փոսը գցելուց հետո էլ մնում է մեծահոգի և իր

[3] Տես՝ Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Զանգակ հրատ., Երևան, 2006։

առաջին զարկերը՝ նրա հետ մենամարտում, զիջում է Մելիքի մորն ու քրոջը՝ հիշելով մանկության օրերին նրանց խնամքն իր նկատմամբ: Դավիթը սիրված անձնավորություն է, որովհետև ինքն էլ է սիրում իր հայրենակիցներին, մարդկանց: Նա խորին հարգանքով ու մեծարանքով հրաժեշտ է տալիս Սասնա մայրերին, քույրերին, որոնց շատ է սիրել:

Օ՛, քուրեր, դուք կացե՛ք բարով,

Դուք ինձի քուրություն եք արե.

Այս տողերից սեր է ճառագում: Սեր ոչ միայն հայրենակցի, այլև ընդհանրապես մարդու նկատմամբ: Նման արժանիքներով օժտված մեծ մարդասերին չէր կարող չօրհնել ու փառաբանել ժողովուրդը: Հուզիչ դրվագ է նաև Դեղձունի սգից դուրս գալն ու պատգամը Քուռկիկ Ջալալիին.

Դավթի մարդասիրությունն ու հարգանքը մեծի նկատմամբ երևում է ոչ միայն հայրենակիցների առումով, այլև թշնամու: Նա ուշադիր լսում է արաբ ծերունուն, որն էպոսում արաբ ժողովրդի հավաքական կերպարն է: Նա քաջ գիտակցում է, որ արար Ժողովուրդը կռիվ է դուրս եկել ոչ իր կամքով, այլ բռնի, ստիպողաբար: Սա ցույց է տալիս հարևան առվուրդների բարեկամության հատկանիշը: Օտար հարստահարիչների գավթողական քաղաքականության, եսամոլության արդյունք է հարևան ժողովուրդների բախումը: Ի վերջո էպոսի հիմնական գաղափարն այն ճշմարիտ միտքն է, որ նվաճողներն ու բռնակալներն են հրահրում պատերազմներ, հասարակ մարդիկ այդ պատերազմի հետ կապ չունեն, նրանք դեմ են պատերազմին: Դա հաստատում է արաբ ծերունին, որը տեսնելով իր երկիրը պաշտպանող Դավթի հաղթական կռիվը՝ մոտենում է նրան ու խնդրելով բացատրում ն խորհուրդ տալիս զենքն ուղղել Մելիքի դեմ, որն հանգիստ քնած էր իր վրանում: Արաբ ծերունու խոսքերում տեսնում ենք հայ ժողովրդի պատերազմը դատապարտող հավաքական խոսքը: Սա է պատճառը, որ Մսրա Մելիքին սպանված տեսնելուց հետո նրա զորքը օրհնում ու փառաբանում է Դավրին՝ նրա մեջ տեսնելով ոչ միայն հայ, այլև արաբ ժողովրդի փրկչին:

-Հա՜ Դավիթ,- կ'ասեն,

Մեռնե՛նք մենք քո գլխուն:

Եթե խոսում ենք Դավիթ բացառիկ մարդկային նկարագրությունից, հայրենասիրությունից և անձնազոհությունից ի սեր հայրենիքն ու մարդը, պետք է նշենք նաև, որ ժողովուրդը կերտել է Դավթին համապատասխան նաև նրա սիրեցյալին՝ Խանդութին: Խանդութի այն խոսքը, թե «առյուծն առյուծ է, էգ լինի թե որձ» էպոսում՝ հերոսների կանանց՝ հայրենասիրության, անձնազոհության, ամուսնու հանդեպ անսահման սիրո ու հարգանքի, նվիրվածության՝ խտացումն է: Հերոսուհիները գեղեցիկ են, խոհեմ, զգայուն ու պարկեշտ միշտ պատրաստ են զոհելու իրենց կյանքը հայրենիքի, ընտանիքի ու զավակների համար: Ինչպես դրուցազունները, այնպես էլ նրանց կանայք օժտված են արտակարգ գեղեցկությամբ եւ հմայքով: Այս ամենի հետ մեկտեղ կանանց կերպարներն արտակարգ վեհ են ու հերոսական: Ի հակադրություն Խանդութի ներկայանում է Չմշկիկ Սուլթանը, ում աղջկա թունավոր նետից էլ սպանվում է հայ ժողովրդի բաղձալի հերոսը: Ժողովուրդն ատելությամբ է խոսում Չմշկիկ Սուլթանի մասին, նրան համարելով թշնամի Չնայած նրան, որ Իսմիլ Խաթունն էլ էր թշնամի, ժողովուրդն այստեղ դրսևորում է չեզոք վերաբերմունք, այսինքն՝ չի ատում նրան, հաշվի է առնում այն հանգամանքը, որ Իսմիլ Խաթունը խնամել է որբ Դավթին: Ժողովրդի նույն վերաբերմունքը՝ հարգանքը, տեսնում ենք Դավթի խոսքում՝ Մելիքի զորքի հետ խոսելիս[4]:

Դավթի այս զգացումն այնքան արդարացի է, որ այն մեծ խանդավառությամբ է ընդունվում արաբ զորքի կողմից հեռանալով Մսր, նրանք Դավթի քաջության ու առաքինության մասին պատմում են ամենուր:

Կարևորագույն նախապայման ունենալով ազատ հայրենիքը, ժողովուրդը Սասունի վերջնական ազատագրմամբ չի սահմանափակվում և այն վերջնական հաղթանակ չի համարում: Հայ ժողովուրդը երազում է բարեկեցության՝ համընդհանուր բարեկեցության մասին, որը կտարածվի բոլորի ըա անխտիր, ուր կյանքի դժվարությունները չեն արգելակի արդարության առաջընթացը: Սրա համար էլ ժողովուրդը չի մեռցնում իր վերջին դյուցազնին՝ Փոքր Միհրին, որի հետ չի մեռցնում նաև իր հույսը: Միհրը՝ որպես ժողովրդի հավերժության, արդարությանը սպասող հսկա անմահ է մնում անմահ պահելով հայ ժողովրդի համամարդկային երազանքներն ու իղձերը: Միհրը հուսահատ է կյանքի դժվարություններից, հողը չի

[4] Տես՝ Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն Հին և միջնադարյան գրականություն, Զանգակ հրատ., Երևան, 2006:

պահում հերոսի ծանրությունը, բայց միննույն է, Մհերը չի հանձնվում, պայքարում է ժամանակների դեմ։ Եվ ժողովուրդը մեծ ոգևորությամբ սպասում է Մհերի գալստյանը, այն ժամանակին, երբ «կկործանվի չար աշխարհը», Հայկը կհաղթի Բելին։ Կստեղծվի նորը, «ցորենի հատիկը կլինի ընկույզի չափ, իսկ գարին՝ մասուրի»։

Մհերի հետ ժողովուրդը ապավարարում է փակում կան Սասնա դյուցազունների և իր մեծագույն հենարանին՝ Քուռքիկ Ջալալուն։ Ժողովուրդը սպասում է նրանց՝ քարայրից դուրս գալուն։ Իր երազանքներն ամփոփելով էպոսի վերջերգում, նա սպասում է իր՝ հանուր մարդկությանն ուղղված երազանքի իրականացմանը։ Այս փաստը՝ Էպոսի համամարդկային գաղափարները, հորինվածքի առանձեահատկությունները, հյուրեղ- բելոն . եծարժեք բովանդակությունը բարձր են գնահատել ոչ միայն հայ, այլև պարազգի շամն 8 աստ մեծանուն մարդիկ։

Սասնա դյուցազունների կերպարներն ընթերցողի հիշողության մեջ մնում են անմոռաց, անուրանալի, որոնց հիմքը ճշմարտացվությունն ու մողովրդական ասայողների հանճարն է։ Մեծանուն գրող Մարիետա Շահինյանը, ֆիննական էպոսի՞ «Կալեվալայի» - ռուսերեն թարգմանության՝ առաջաբանում գրում է, «Երբեք չմոռացվող՝ հզոր մարդկանց կերպարներ, բնության վիթխարի պատկերները, ճշգրիտ նկարագիր աշխատանքային պրոցեսի, հագուստի, գյուղական կենցաղի- այս բոլորը մարմնավորված է «Կալեվալայի» վիպական բարձը պոեզիայում

Այս նույնը՝ կարող ենք ասել մեր Էպոսի համար։ Արշավիր Մխիթարյանը գրում է «Սասունցի Դավիթ» էպոսի ամենաբարձր արժեքներից մեկը նրա պատկերավորման ինքնատիպ բնույթն է ժողովրդական մտածողության ամենաբնորոշ գիծը նրա պարզությունն ու կոնկրետությունն է, որն արտահայտվում է հստակ գրավիչ ու պատկերավոր՝ խոսքի միջոցով

Իսկապես, էպոսը կատարյալ է, կատարյալ նախ իր մեծարժեք՝ գաղափարներով, հյութեղ լեզվով, բանաստեղծական շնչով ու պատմականությամբ։ Ֆրանսիացի մեծ հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին խորին հարգանքով ու մեծարանքով է խոսում Էպոսի ու նրա կազմողների մասին. «Կարդալով այս ծավալուն ու հոյակապորեն ստեղծված էպոսը՝ կարելի է մտածել, թե այն գերազանց գիտնականների վերաձուլած մի ծաղկաքաղ է։ Նման բան չկա։ Հանձնախմբի

անդամները վերաշինել են բնագիրը բանասիրական մանրակրկիտությամբ նա գիտական ընդունված խստությամբ: Նրանք չեն ավելացրել անգամ մի տող, ծայրը ծայրին բերելու համար: Ողջ բնագիրը ժողովրդական մայր երակից է»:

Մեր ազգային էպոսի գաղափարախոսությունը երբեք հնայող չէ, որովհետև ալե մարդուց պահանջում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, չենթարկվել բռնակալ ուժին ունենալ, անկախ հայրենիք էլ ամենակարևորը՝ խաղաղ գոյակցել աշխարհի ժողովուրդների հետ: Ֆրեդերիկ Ֆեյդին հայ ազգային էպոսը համարել է աշխարհի ամենախաղաղասեր էպոսը և հույս է հայտնում, թե նրա ֆրանսերեն տարբերակը «հնարավորություն կտա արևմուտքի ընթերցողին վայելելու այս հոյակապ էպոսի համն ու քաղցրությունը»[5]:

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսումնական գործընթացում առաջին հերթին անհրաժեշտ է ծանրանալ մարդկային ու բարոյական արժեքների վրա կապելով դրանք մեր օրերում ձևավորվող ու հաստատվող արժեքային համակարգի հետ: Ի վերջո գրականության ուսուցումն ունի ճանաչողական և դաստիարակչական նշանակություն:

«Դաստիարակությունն ու կրթությունն առավել զարգացնելու համար ամեն ազգ պետք է ունենա ահրաժեշտ կարդալիք գրքեր. «Մարդն իր գործով այնքան է, որքան գիտելիք ունի»: Գրականության ուսումնասիրությունը սովորողին զուտ գրական երևույթներին ծանոթացնելը չէ միայն այլ ինքնաճանաչման, կատարելագործման հանրակեցական դաստիարակության միջոց: Այն արդյունավետ միջոց է բարոյական բարձր արժեքների ձևավորման արմատավորման: Գրականության դասավանդման հիմնական ու նպատակներից մեկը՝ անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը հաղորդակից դարձնել»:

[5]Տես՝ Կիրակոսյան Վ., Գրականությունը 7-9-րդ դասարաններում, Մեթոդական ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա հրատ., Երևան, 2006:

Այս պարագայում շատ կարևոր է մեթոդների ընտրությունը, դասարանի աշակերտների ընդունակությունների ճիշտ ճանաչումը: Եթե ուսուցիչը հասկանում է, թե ինչ մակարդակի երեխաներից է կազմված դասարանը, ապա նա առավել ճիշտ մեթոդներով է իրականացնում իր առարկայի ուսուցումը: Ուսուցման արդյունավտության համար անհրաժնշտ է ապահովել «զննականությունը»:

Էպոսի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է հատկապես միջին դպրոցում: Նոր ծրագրով էպոսի ուսուցումը նախատեսված է իններորդ դասարանում, երբ տասնհինգամյա պատանին հակված է ինքնուրույնության և այս հանգամանքից անհրաժեշտ է օգտվել: Այսինքն՝ աշակերտի տպավորվող էությունը հեշտությամբ կարող է յուրացնել ու իմաստավորել էպոսի գաղափարները, դրանք կապելով ներկայի հետ:

Դասի նմուշօրինակ

Առարկա՝ գրականություն

Դասարան՝ 9-րդ

Ուսուցչուհի՝ Նելլի Ավետիսյան

Դասի թեմա՝ «Սասունցի Դավիթ» էպոսի բնութագիր

Դասի տևողություն՝ 45 րոպե

Դասի տեսակ՝ հաղորդման

Դասի համակարգ՝ ԽԻԿ

Դասի նպատակ՝

1. Էպոսի, որպես ժողովրդի հավաքական մտածողության արտահայտության ճանաչում:
2. Էպոսի գաղափարախոսության, հայ ժողովրդին հատուկ բարոյական արժեքների ընկալում և գնահատում
3. Էպոսի պատկերային համակարգում բարբառի, ժողովրդախոսակցական լեզվի դրսևորումներն ընկալելու կարողություն
4. Ինքնուրույն վերլուծելու կարողությունների զարգացում
5. Էպոսի մեջ չափազանցությունների և հրաշապատում տարրերի առկայության ընկալում և մեկնաբանում

Օգտագործվող հիմնական մեթոդներն են՝ հարց ու պատասխան, ներածական դասախոսություն:

Խթանման փոխլ

Քայլ 1. Աշակերտներին կատիվացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով ուսուցչուհին տալիս է հետևյալ հարցադրումները՝

1. Ի՞նչ է էպոսը:
2. Ինչպե՞ս է կոչվում մեր ազգային էպոսը:
3. Քանի՞ ճյուղից է կազմված այն:
4. Ի՞նչ հերոսներ եք հիշում էպոսից:
5. Ի՞նչ պատմամշակութային հուշարձան գիտեք էպոսի հետ կապված:
6. Օտարազգի ի՞նչ էպոսներ գիտեք:

Ուսուցչուհին գրատախտակին գրում է բանալի բառ՝ էպոս և հարցնում, թե օտարազգի ի՞նչ էպոսներ գիտեն: Աշակերտները հնչեցնում են պատասխաններ և գրում բանալի բառի շուրջբոլորը: (10 րոպե)



Քայլ 2. Իմաստի ընկալման փուլ

Իմաստի ընկալման փուլում ուսուցչուհին օգտագործում է ներածական դասախոսության մեթոդը: Մեթոդի աժավելությունն այն է, որ ուսուցչուհին կարճ ժամանակամիջոցում համառոտ ներկայացնում է էպոսի ընդհանուր բնութագիրը, գրի

առնողներին, պատմական հիմքը, կառուցվածքը, արտահայտած գաղափարները, հերոսներին և այլն:

Էպոսը նախ և առաջ ներկայացնում է որպես հայ ժողովրդի հավաքական մտածողության արտահայտություն: Ուսուցչուհին խոսում է այն մասին, որ «Սասնա ծռեր» էպոսի մեջ հրաշալիորեն համադրված են հայ ժողովրդի բնավորության շատ գծեր՝ ազատաբաղձություն, հայրենասիրություն, բոռմալիաի առարինություններ Ներողամություն, բարություն, մարդասիրություն, պապասյուն, անխարդախ վերաբերմունք և այլն: Հրուշայի են բոլոր կերոաագները, ռավել բնութագրական Դավթի կեալարը: ակ Փոքր Միհրի Ագռավաքարում վակվելը շատ իտուն խորհուրդ ունի իր մեջ: Էպոսը՝ պատմական և առաելական իրողությունների համադրություն է:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել դյուցազներգության լեզվին՝ գործողություններով հարուստ պատմողական խոսք, ժողովրդական մտածողությանը բնորոշ չափազանցությունները, բարբառային խոսքի կենդանություն և հյութեղություն, երգվող հատվածներ և այլն: Անհրաժեշտ է նշել, որ հայտնի է «Սասնա ծռեր» Հպոսը հայտնի է Մշո, Մոկաց և Սասանի բարբառներով:

Էպոսի պատմական հիմքը՝ 8-10-րդ դարերն են, երբ հայ ժողովուրդը գտնվում էր արաբական լծի ներքո, ազատագրական պայքար էր մղում վերականգնելու իր անկախությունն ու պետական ինքնուրույնությունը: Բոլոր հերոսներ այս հիմնական գաղափարի կրողներն են: Էպոսը բաղկացած է չորս ճյուղից «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միհր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միհր»: Ամեն ճյուղ սկսվում է ժողովրդի բառ ու բանը ներկայացնող օրինանքներով, որոնք նախապատրաստում են ճյուղի բովանդակությունը, հայրենասեր հերոսներին ժողովուրդը տալիս է քառսուն կամ հազար օղորմի, իսկ բացասականներին, օրինակ՝ Մելիքին ու Չմշկիկ Սուլթանին չի տալիս օղորմի:

Էպոսի մասին 16-րդ դարում առաջին անգամ գրառել են պորտուգալացի ճանապարհորդները: 1874 թ. Գարեգին Սրվանձտյանցը հրատարակում է «Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» վերնագրով՝ Մուշի բարբառով առաջին պատումը: Պատումը պատմողները ժողովրդական մարդիկ էին, որոնց ասում էին ասացող: Տարբեր ասացողների կողմից պատմվելով՝ էպոսի առանձին ճյուղերը փոխվում են և դառնում առանձին տարբերակներ, որոնք կոչվում են պատումները: 1939թ. Էպոսի հազարամյակի

կապակցությամբ 60 պատումների հիման վրա ստեղծվում է համահավաք բնագիր «Սասունցի Դավիթ» վերնագրով: Գրքի խմբագիրն էր Հովսեփ Օրբելին, իրականացնողները՝ Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը: Էպոսը բարձր են գնահատել ոչ միայն հայ, այլև օտարազգի շատ ուսումնասիրողներ: «V դարի կեսերին հայ գրականությունը հասնում է իր Ոսկեդարին Աստվածաբանություն, հոնոր որ քնարերգություն, վկայաբանություն, պատմագրություն, միջնադարի գրականության բոլոր այն տեսակները, որոնք ծանոթ էին Միջերկրականի ավազանի քրիստոնեական գրականությանը, երևան եկան հույ գրականության մեջ՝ մեծարեք գործերով: Հայերը կողք կողքի կանգնեցին հույների, լատինացիների և ասորիների հետ»,-գրում է հայագետ Ֆեյդին Օսյանի ֆրանսերեն թարգմանության առաջաբանում:

Էպոսում ջրի պաշտամունքը հատուկ տեղ ունի: Ջրից են ծնվում Սանասարն ու Բաղդասարը, «ազնանցորդու• զորեղ ջրի ակունքին են նրանք կառուցում իրենց տունը, ջրի հատակից է Սանասարը դուրս բերում զորեղության խորհրդանիշ հեքիաթային ձին, զենքն Fն. զրահը: Ջրից են ուժեղանում Սասնա հերոսները:

Էպոսը լի է բազմաթիվ խորհրդանշաններով, որոնցից են պահապան խաչը՝ Խաչ Պատերազմին, Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին՝ կայծակե թուրը, առյուծը, որին կիսում է Մհերը, հոր անեծքը որդուն, հողը, որ Մհերին չի կարողանում պահել, Մհերի Դուռը, խոր փոսը, որտեղ թաքնվում է Մսրա Մելիքը՝ որպես դև, որպես չարք: (10 րոպե)

Քայլ 3. Կշռադատման փուլ

Խոսելով էպոսում արտահայտված գաղափարների մասին, վերլուծելով հերոսների արաքներն ու հասարակական վարքը ուսուցիչը աշակերտներին մղում է խորհելու այդ գաղափարների արդիականության մասին: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և նրանց բաժանում թղթեր, որոնց վրա գրված են նախապես էպոսից դուրս բերված հատվածներ:

Առաջին խումբը կարդալով հատվածը պետք է ցույց տա, թե ի՞նչ գաղափար է արտահայտված նրանում:

Հանդարտ կացեք,

Մեկ էլ չ'Էլնեք ու գաք մեր Սասնա:

Երկրորդ խումբը հատվածից առանձնացնում է այն նախադասությունը, որ ցույց է տալիս ժողովուրդների վերաբերմունքը պատերազմների նկատմամբ:

Աղքատ ու խիղճ մարդ են էդոնք.

Որը իր մոր մեկուճարն է,

Որը նոր պսակված տղա,

Որը իր օջախի սունն է,

Որը հանգած մի տան ճրագ:

Երրորդ խումբը կարդալով հատվածը պետք է առանձնացնի այն նախադասությունները, որոնցով արտահայտվում է Դավիթի միամտությունը և մեկնաբանի:

Բերին, զԴավիթ դրին սեղանի մոտ.

Ոսկին մի կողք լցրին, կրակ մի կողք:

Դրին Դավթի առջև, ասին.

-Դավի՛թ, ա՛ռ,ա՛ռ, ո՞ր մեկ կուզես:

Դավիթ իր ձեռ պարզեց ոսկուն,

Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ:

Իր մատ որ կրակին կըպավ, կրակ կպավ մատին.

Մատ էրելով՝ տարավ բերան, լեզուն էլ էրեց:

Չորրորդ խումբը պետք է կարդա հատվածը և մեկնաբանի, թե ինչ գաղափար է այն արտահայտում:

Սանասար ասաց Բաղդասարին.

-Առաջ զմեր բե՞րդ շինենք,

Թե չէ՝ զէդա աղքատ-ուղքատի տներ:

Բաղդասար պատասխանեց.

-Առաջ շինենք զէդոնց տներ,

Ու նոր շինենք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա

Արևուն առջև կենա:

Հինգերորդ խումբը կարդալով հատվածը, ինչպե՞ս է մենկաբանում Մեծ Միհերի արարքը:

Տնեն ձեն մի էկավ.

Մըսրա խաթուն տըղան կը խաղցըներ,

Կը ծիծաղեր, կ՛ասեր.

«Քո մեր քեզի մեռնի, Մելիք,

Մըսրա օջախ կ՛անգնացուցես,

Հայու օջախ փչացուցես»:

Հատվածների ընտրությունը միտված էր ամփոփելու էպոսում արտահայտված, հայրենասիրությունը, ժողովուրդների խաղաղ գոյակցելու ցանկությունը, հայ ժողովրդի միամտությունը, մարդասիրությունն ու աշխատասիրությունը: Եվ ցույց տալու, որ մեր ազգային էպոսը մեր ազգային նկարագիրն է:

Քայլ 4. Ուսուցչուհին տալիս է տնային առաջադրանք՝ կազմել գլխավոր հերոսների տոհմածառը, ավելացնել մյուս հերոսներին և ցույց տալ արյունակցական կապը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք այն քչերի մեջ ենք, որ հպարտությամբ պահպանում ենք հետաքրքրությունը. մեք Էպոսի հանդեպ: Էպոսը մեր ինքնության արտահայտություններից մեկն է կատարեցան «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության ուսումնասիրությունն հանգում ենք հետնյալ եզրակացությունների,

- Հայ ազգային էպոսը, որպես մշակութային հուշաձան պահպանում է իր պյատվավորի և գործուն տեղը մշակույթի և հոգևոր կյանքում, այն կենդանի է ժողովրդի հայում: Այս տեսանկյունից շատ կարևոր է մեր էպոսի գրաված տեղը մեր մշակայթի մեջ և սա էլ առանձնացնում է մեզ աշխարհի շատ ժողովուրդներից:
- Հազար տարի առաջ ստեղծված, դարեր շարունակ բանավոր գոյություն ունեցաղ մեր էպոսն առանց ճիշտ հասկանալու և ճիշտ գնահատելու դժվար թե կարողանանք ճիշտ հասկանալ մեր ինքնությունը, իսկ մեր ինքնությունը հասկանալև 1 ճանաչելը շատ կարևոր է: Էպոսն անհրաժեշտ է մեր ինքնության պահպանման համար՝ մինչև անգամ մեր մշակույթը ձուլումից զերծ պահելու համար: Ի վերջո համաշխարհայնացում ասվածը որքան էլ կարևոր, այնքան էլ վտանգավոր միտումներ ունեցող բան է: Եվ այս ժամանակներում ու պայմաններում էպոսի ուսումնասիրությունն ու ճիշտ արժեքը պահպանելը կարևորագույն խնդիր է:
- Անհրաժոշտ է հասկանալ, թե այսքան դառնություն տեսած ժողովուրյը՝ ինչպե՞ս ստեղծեց այդքան ազնվական հերոսներ, այդքան ասպետ հերոսներ: Այս իմաստով՝ բարոյական չափանիշների պահպանման տեսակետից մեր էպոսը լավագույնն է Դավաճանության, նենգության ոչ մի նշույլ չկա Սասնա հերոսների մեջ: Եվ սա զարմանալի է հատկապես այն առումով, միջնադարյան այս ժամանակահատվածում տիրում էր թալանը, ավերը, սպանությունները չունենք պետականություն, պաշտպան ուժեր, երկիրը դարձել էր ասպատակությունների ասպարեզ, բայց այնուամենայնիվ էպոսը ամուր կերպով պահպանեց իր բարոյական մաքրություն ու ամրությունը:

- Միայն այն, որ հազար տարի է, որ էպոսն ապրում է ժողովրդի մեջ, արդեն մեծ հետաքրքրություն է առաջացնում էպոսագետների շրջանում, լինեն նրանք հայ, թե օտարազգի: Եթե անտիկ էպոսը՝ «Իլիականն» ու «Ոդիսականը» 3000 տարի առաջ է գրի առնվել, իսկ հայ էպոսը հազար տարի ապրել է բանավոր խոսքում, չի մոռացվել, ընդհակառակը, ավելի է հղկվել և 19-րդ դարում նոր գրի է առնվել, բայց միենույն է չի կորցրել իր դերն ու նշանակությունը:
- Գրական մշակույթը չկորցրեց իր հետաքրքրությունը մեր էպոսի նկատմամբ, այն չվրիպեց ոչ միայն հայ, այլև օտարազգի ուսումնասիրողների աչքից: Ռուս Էպոսագետ Մելիտինսկին իր գրքում շեշտել է հայ էպոսի բարոյական արժեքի մասին:
- Ցանկացած էպիկական հուշարձան, եթե հիմբում առասպել չունի, այն էպիկական չէ և չնայած դրան, որքան էլ այն հարուստ առասպելական հիմք ունի, այն պատմություն է, խոսքի արվեստ: Էպոսը լայն ընդգրկում է Հետաքրքիր զուգահեռ է Ծովինարի անարատ հղիությունը Քրիստոսի ծննդյան հետ: Այս հետաքրքիր զուգահեռին անհրաժեշտ է խորը քննություն:
- Էպոսը հենվում է Սանասարի ծննդյան հիմքի վրա: Սանասարն այն հերոսն է, որն իր կնոջն ասում է. «Մինչև քեզ համար եկած այս մարդկանց երիտասարդությունը չվերադարձնես, իրենց հին տեսքը չունենան, քեզ չեմ տանելու այստեղից», Դեղձունը զարմանում է, չէ՞ որ նրանց երիտասարդությունը վերադարձնելու դեպքում, նրանք կռիվ են անելու և վնասելու են Սանասարին: Սա շատ հետաքրքրական նրբագիծ է: Սա ցույց է տալիս ժողովրդի մտքի թռիչքը, հանճարը, թե իր երևակայության մեջ ի՞նչ տեսակ ասպետ է ստեղծել Սանասարից: Ասպետ լավագույն իմաստով՝ կտրուկ, որոշակի բարոյական սկզբունքներ ունենալու իմաստով: Հերոսներին համարում ենք գեղջկական անձինք, բայց ոչ սոցիալական նկատառումով, այլ բարոյական ըմբռնումների իմաստով: վերջո ժողովրդի մեջ ազնվականությունն ու ասպետականությունը միշտ էլ բարձր է գնահատվել: Սա է Սանասարի էության ճիշտ ըմբռնումը: Նա սկիզբն է այն տան ու տոհմի, որը հավատարիմ է բարոյական բարձր արժեքների:

- Այսպիսով էպոսը դիտարկելով որպես հայ ժողովրդի ինքնության կնիք, բարձր գնահատելով նրանում արտահայտված համամադկային գաղափարները, անհրաժեշտ է հասկանալ, թե որքան կարևոր է այն ճանաչելն ու պահպանելը, նրա դերն ոm նշանակությունը մեր կյանքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարյան Դ., Գրականություն, 9-րդ դասարան, Տիգրան Մեծ հրատ., Երևան, 2018:
2.
3. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդական հերոսական էպոսը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1960:
4. Դոլուխանյան Ա., Եվրոպացի հայագետներ V. Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, ԵՊՀ հրատ.,Երնան, 2008:
5. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Զանգակ հրատ., Երևան, 2006:
6. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն Հին և միջնադարյան գրականություն, Զանգակ հրատ., Երևան, 2006:
7. Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական հերոսավեպ, Առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի, նկ. Հ. Կոջոյան, Լույս հրատ, Երևան, 1981: